

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱ-
ՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
(Պ-208-08.12.2017-ՊԻՄԻ-017/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումը (խմբակցու-
թյանը բոլոր հանձնաժողովներում ներկայացված լինելու իրավունք վերապահելու մա-
սով) ընդունելի է, այդուհանդերձ անհրաժեշտ ենք համարում այն դիտարկել Հայաս-
տանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մոտեցումների լույսի ներքո,
ինչպես նաև այդ համատեքստում անդրադառնալ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաս-
տանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ օրենք) համապատաս-
խան դրույթներին:

Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ
մասի համաձայն՝ մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություն-
ներում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության վերոշարադրյալ դրույթին
համահունչ՝ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մշտական հանձնաժողո-
վում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի
համամասնությամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքի հիշյալ դրույթների
համակարգային վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ նախագծով առաջարկվող
կարգավորման պայմաններում կարող է խախտվել հանձնաժողովում տեղերի բաշխման՝
սահմանադրական ամրագրում ստացած համամասնության սկզբունքը, որը կոչված է
ապահովելու մշտական հանձնաժողովներում ընտրողների առավել շատ ձայներ ստա-
ցած քաղաքական ուժերի ներկայացվածությունը՝ որպես ընտրական իրավունքի արդյու-
նավետ իրացման եզրափակիչ օղակ: Այլ կերպ ասած, առաջարկվող մեխանիզմը պետք

է հնարավորություն ընձեռի, ըստ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի (այսինքն՝ ընտրություններում առավել շատ ձայներ ստացած քաղաքական ուժերի) համամասնության, ավելացնել տվյալ խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թիվը կոնկրետ հանձնաժողովի կազմում: Հակառակ դեպքում, առաջարկվող կարգավորումը կարող է առաջացնել իրավական վեճ՝ սահմանադրականության տեսանկյունից:

Պ-208-08.12.2017-ՊԻՄԻ-017/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «7-րդ մասով» բառերը փոխարինել «6.2-րդ եւ 7-րդ մասերով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածը 6-րդ մասից հետո լրացնել նոր՝ 6.1-ին եւ 6.2-րդ մասերով.

«6.1. Խմբակցությունը յուրաքանչյուր հանձնաժողովում ունի առնվազն մեկ պատգամավոր ներկայացնելու իրավունք:

6.2. Եթե խմբակցության անդամների ընդհանուր թիվը փոքր է մշտական հանձնաժողովների ընդհանուր թվից, ապա խմբակցությունն իրավունք ունի իր անդամին ներկայացնելու մեկից ավելի մշտական հանձնաժողովների կազմում ընդգրկվելու համար: Այդ դեպքում խմբակցությունը յուրաքանչյուր մշտական հանձնաժողովում կարող է ունենալ ոչ ավելի, քան մեկ պատգամավոր, իսկ նույն պատգամավորը կարող է լինել ոչ ավելի, քան երեք մշտական հանձնաժողովի անդամ:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ խորհրդարանում ներկայացված խմբակցությունների անդամների քանակը կարող է բավարար չլինել բոլոր հանձնաժողովներում ներկայացվածություն ապահովելու համար:

Խմբակցությունները իրենց վերապահված պարտականությունները պատշաճ կերպով իրականացնելու համար անհրաժեշտ է, որ ներգրավված լինեն բոլոր մշտական հանձնաժողովների աշխատանքներում, սակայն «Ազգային ժողովի կանոնակարգ» գործող սահմանադրական օրենքը սահմանափակում է այդ հնարավորությունը, քանի որ փոքրաթիվ խմբակցությունները, հինգ մշտական հանձնաժողովից ավելի լինելու դեպքում, չեն կարող բոլոր հանձնաժողովներում ներգրավվածություն ունենալ: Ըստ ՀՀ Սահմանադրության 106-րդ հոդվածի մշտական հանձնաժողովների առավելագույն քանակը 12-ն է:

Առաջարկվող փոփոխությունը հնարավորություն է ընձեռում փոքրաթիվ խմբակցությունների միեւնույն անդամին ներկայացնել առավելագույնը 3 հանձնաժողովում: